

# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՊՐՈԿՂ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԱՍՏՈՒՍԾԱԲԱՆԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԱՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ

ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՐԱՆԻՍ ԹԻՒ 1123 ԳՐԶԱԳՐԻ ԳԱՂՏՆԻՔՆ



Յաւէտ յիշատակաց և պարծանաց արձան մի կանգնած պիտի լինէին մեր ոսկեդարեան թարգմանիչք, եթէ պղատոնական այս բարձր հանճարոյն աստուածաբանական Ոլլիմպոսն իսկ, այն է Շահկապադն աստուածայինը, փոխադրած ըլլային ի յունէն՝ ի խոնարհազոյն հովիտս հայկական դարութեան: Սակայն այն հսկայազործ դարուն և կորովի գործիչներու տեսութեանէն այս ինչ կամ՝ այն պատճառաւ վրիպածն՝ յԺԳ. դարուն սկիզբն իրագործեցաւ, խոնարհ արեղայի մի ձեռքով. և ահա այս իսկ շատ է մեզ, այս տեսակ զրուածոց հայկական թարգմանութեանց շարքն և վարկը վեր բարձրացնելու համար՝ ի մէջ այնքան սրբազան թարգմանութեանց, զորս ոչ ոք յարեմտեան ազգաց ժառանգած է իւր նախնեացմէ այնքան ստուարաթիւ:

Պրոկղի Դիադոնոսի « Աստուածաբանական շահկապաց » հայերէն թարգմանութեան մասին արդէն իսկ անցեալ և նախորդ տարիներու մէջ ընդարձակ և հմտալից յօդուածներ հրատարակեցան « Հանդէս՝ ամսօրեայ » ի մէջ, որոց հեղինակն Վ. Հ. Յ. Տաշեան ճոխ տեղեկութիւններ մատակարարեց իւր ընթերցողաց, յոյն իմաստասիրին թէ՛ կենաց և զրուածքին և թէ՛ հայ թարգմանութեան և թարգմանչի վրայ, սուր դիտողութիւններ ընելով միանգամայն ցայնալայր իրեն ծանօթ գրչապիւր օրինական և անոնց որպիսութեանց վրայ, զորս կամ ի ցուցակաց և կամ իրեն հազորդուած տեղեկութիւններէն ճանչնալու առիթ ունեցած էր: Այս կետիս վրայ նորէն գտնուել և խօսիչն իսկ աւելորդ էր, եթէ թագմավիպի ընթերցողաց

առհասարակ ծանօթ ըլլային յիշեալ յօդուածներն և մենք ուրիշ ըտեւիք չունենայինք:

Արդէն՝ ընդհանուր կարծիք կայր, թէ Պրոկղի թարգմանութիւնն եղած է (յամին 1248) Սիմոն<sup>2</sup> կրօնաւորի ձեռքով, ի վրաց լեզուէ: Իսկ մի այլ Սիմոն, այն է Գառնեցի եպիսկոպոսն, չորս դար վերջ (այսինքն է յամին 1651, Պրոկղի գրոց պարզ Ղուծմունքն յօրինած է, իր նախորդին թարգմանութիւնը միայն ի կիր արկանելով: Այս երկու կէտերս իսկ ապացուցուած են Սիմոն թարգմանչի ի վերջ կոչս թարգմանութեան զրած բացորոշ Յիշատակարանովն, զոր Սիմոն Գառնեցին իսկ ի մէջ բերած է իւր Ղուծմանց յառաջաբանի մէջ: Դիտելու ենք և այս, որ այդ յիշատակարաններէն զուրս՝ արտաքին ուրիշ վերկայութիւններ չկան ի նպաստ հայերէն թարգմանութեանն՝ ի վրացերէնէ յեղած լինելուն մանաւանդ թէ՛ մէկ կողմէն տոհմային մատենադրաց լուսթիւնն, իսկ միւս կողմէն թարգմանութեանս մէջ երեցած ստուար խումբ մի յունարէն բառերու և ամբողջական նախա-

2. Սիմոն թէ և ազգաւ հայ, սակայն կը բնակէր Տաւրաց գաւառին մէջ Իւանէի ձեռակերտ վրաց Պրոկղի անուանեալ մենաստանին մէջ: Քահանայութեան առընթեր անոր սրուած « Կրօնաւոր » վերագրէն իսկ կը հետեի, թէ այն Միաբանութեան անդամակից և օ. էր Սիմոն. բայց անոր կենաց միւս պարտական էր յոյժ գիտնալ, թէ Հայք և Վրաց ինչ պայմաններով իրարու հետ կը բնակին այն պիտի ժամանակի մի մէջ: Արդեօք այժմեան վրածէն Հայոց կերպով, թէ ընդհակառակն, քաղաքային իրաւանց և դալանց զօրութեամբ՝ փոփոխակի կը տիրանային այդ վանքին:

1. Տես 1893, Թիւ 4, էջ 97, և Թիւ 8, էջ 139:

գատութեանց <sup>1</sup>, որոնք պարզապէս տառադար  
 ձուած են՝ առանց թարգմանուելու, ընդհակա  
 ոակին յունարէնի վրայէն եղած կը թուին  
 ցուցնել զայն . վասն զի բովանդակ գրուածքիս  
 մէջ մի միայն վրացերէն բառի կը հանդիպինք ,  
 յէջ 672, այն է « գանւաչիտաւսի » . սակայն  
 և այս այնպիսի հատուածի մի մէջ, որ Պրոկղի  
 բնագրէն գլխովին օտար է, ինչպէս յունարէնի  
 բազդատութեանէն իսկ քաջ կը տեսնուի: Երկրորդ,  
 իբրև համագոր յուն . սիրայ և հայ . յարածը  
 գեաջ բառերու մէջ բերած է հեղինակին շարելով .  
 « Սայբ բառք յերիս լեզուս միապէս սիրայ  
 կոչին » , և՛ այլն : Երրորդ, տեղ տեղ այլ  
 յունարէն բառերու քով հայերէն համագոր բա  
 ւեր գրուած են իբրև մեկնութիւն : Այս վերջին  
 երևոյթիս աւելի կը կնճռէ վրացերէնէ քան թէ  
 յունարէնէ թարգմանուած լինելու խնդիրն ,

1 . Գնենք այդ կարգի բառերէն և բացա  
 տրութիւններէն մասն մի, որոնք կը գտնուին  
 թէ Պրոկղի բնագրին, թէ Լուծմանց և Մկ .  
 և Բն . հատուածոց մէջ : Բէլ 604 ստիսի, պե  
 իիւմիւնայ, սիրայ . — յէլ 605 դիւմիս, նոյի  
 մս, նոյիտոն . — յէլ 610 պրօպիմս, կատաս  
 կեի, սիւնպեղազմս, եկմազիոն, սիլլոթիզմոն, մու  
 սիկոն, իպատո՛, նիտս՛, կաթիլոն (?) , խօշիոն . —  
 յէլ 629 պերիսարտիո՛, կամարտիո՛, պերիսո՛,  
 այտիո՛, տեպիսո՛ : Բէլ 637 Պլատոնի Փեդրոսէն  
 յառաջ կը բերուի ամբողջ նախադասութիւնս .  
 « Տի՛ տօ՛ն, ո՛ն տօ՛ն արիստօ՛ն, ի տօ՛նն ումննօ՛ն  
 կալիստո՛ն (չալիստո՛ն այլուր) » : Բէլ 638 ուրիշ  
 ստառուածաբանի մի խօսքը կը գտնուի, այս  
 պէս . « Մրե՛՛ կե՛ս քեմտօրէնս անանկայսի տե  
 կան տեւպիլիօլիկն » ? — Բէլ 693 կատեպիան,  
 կարիպարքսիս, կատաւերե՛քսիս, դիոդիմս, ա  
 պորիս . — Բէլ 727 կեթո՛, կրօնո՛, ոչարանն,  
 կարեգեմնի . — յէլ 703 ոսարիստո՛տեիմիս  
 քեո՛ս . — յէլ 738 եո՛ն եո՛նի պեչարի, պրօբիս,  
 դիպիս, մնոս վասպիլօս, մետապատիլօս, քնու  
 տիս . օնկոս, մնա՛ վի՛պիս, և այլն :

Բառերէս ոմանք սխալ տառադարձուած են,  
 ոմանք ալ, — ինչպէս սիլլոթիզմոն և մուսիկոն  
 ըստ ըստիմ ձայնից, բայց թէ թարգմանչէ՛ն ար  
 դեօք, եթէ յունգօրիկապօլս՝ դժուար է որո  
 չել . իսկ յուն ճետեղութեանը յօրինուած  
 հայեցի բառերն և բացատրութիւնք արդէն ման  
 բամանութեամբք մէջ բերուած են « Հանդի  
 սի » մէջ (1892, Թիւ 8, էջ 130-133) :

եթէ հիմնաւոր համարինք Հ . Թ . Տաշեանի  
 ենթադրութիւնը, այսինքն է, թէ ո՛չ Սիմոն  
 կրօնաւորն և ոչ այլ Գառնեցիս յունարէն գի  
 աեին : Արգարե, յունարէն չդիտող Սիմոնն  
 ի՛նչպէս կրցաւ հասկնալ այն յունարէն բառերն  
 և հայերէնի վերածել, եթէ ենթադրենք իսկ,  
 թէ այն բառերը յունարէն հին բնագրի ձեւ  
 քով անցած ըլլան վրացերէնին մէջ :

Իրաւամբ ուրեմն Փ . Կոնիբեր այս և Էլ  
 միածնայ թ . 924 ձեռագրի տարբերութեանց  
 վրայ հաստատուած, այն կարծիքն յայտնեց,  
 թէ Պրոկղի Շաղիկապսց հին թարգմանութիւն  
 մ՛նա եղած ըլլալու էր յունարէն բնագրէն՝ ի  
 հայ . և թէ այս վերջինս յետոյ ուրեմն վրա  
 ցերէնի փոխուելով և վրացերէնն ալ պարձեալ  
 ի հայ, այնպէս մուտ գտած ըլլան յունարէն  
 բառք և բացատրութիւնք երկաքանչիւր թարգ  
 մանութեանց մէջ : Այս մասին վրայ յետոյ  
 պիտի խօսինք . այժմ զայս միայն կ՛ըսենք, թէ  
 մինչև ցայսօր հայերէնին բնագիրը ըլլալու չափ  
 վրացերէն հնագոյն ձեռագիր մի գեո չլայտ  
 նուեցաւ . մանաւանդ, թէ Տփղիսի Վրաց  
 հրատարակչական ընկերութեան ցանին մէջ  
 նշանակուած Դիպոլիսոսի ձեռագիրն բազդա  
 տութեամբ Էլմիածնի թ . 924 ձեռագրին՝ ա  
 մենանոր է և շղագիր . այնպէս որ եթէ ուրիշ  
 վրացերէն հին ձեռագիր չլայտնուի, այնուհե  
 տեւ աւելի բանաւոր պիտի լինի ըսել, թէ  
 Սիմոն, — կամ՝ այլ ոմն, — վրացերէնն  
 ընդհակառակն հայերէնէ թարգմանած ըլլայ :

Անցեալ տարի՝ Կոնիբերի ձեռքով Էլմիա  
 ծնի թ . 924 ձեռագրէն ընդօրինակուած մի  
 քանի հատուածներ, որք հրատարակուեցան  
 « Հանդիս ամսօրեայ » » ի մէջ, — համա  
 մատուցեամբ թ . 1859 ձեռագրի թ . 1859 է  
 Գառնեցոյ) հատուածոց, — առիթ տուին Հ .  
 Տաշեանի աւելի որոշ կերպով յայտնել իր կար  
 ծիքն՝ այսպէս . « Այժմ որ սոյն մի միակ ձե  
 ոագրէն (թ . 924) ունինք առջևինս երկու  
 կտոր, համադուեցանք որ այն՝ զոր հայագէտն  
 « հին թարգմանչաց գործք » կ՛անուանէր, չէ  
 արդեամբ հնագոյն թարգմանութիւն, այլ նոյն  
 Սիմէոն կրօնաւորի յամին 1248 թ . Գ . Ը  
 բաժ թարգմանութիւնն է, ի հարկէ այնպէս

2 . Տեւ 1893, թ . 12, էջ 375 :

մեծ տարբերութեամբ՝ որ դիւրաւ կրնայ մէկն ուրիշ թարգմանութիւն կարծել » :

Արդ՝ եթէ հայերէն հին և նոր թարգմանութեանց խնդիրներն պարզապէս Պրոկղի աստուածաբանական շարժապաց վրայ կեդրոնացած նկատենք, առանց ուրիշ պարագայից, ուղիղ է Հ. Տաշեանի եղբակցութիւնն. վասն զի Գառնեցիին՝ Միմոն կրօնաւորի թարգմանութեանէն դուրս ուրիշ թարգմանութիւն կամ բնագիր գործածած չէ, և այս քաջ կը տեսնուի Միմոնի և Գառնեցւոյ ձեռագրաց հաստատոց Պրոկղատութեանէն իսկ, զոր յիշեցիրք: Բայց Պրոկղի բնագրէ շատ աւելի ընդարձակ այն լուծմունչն և Բնագիրքն՝ որը կը պարունակին մեր Մատենապարանի թ. 1123, - գուցէ թէ և Էջմիածնի թ. 923, - ձեռագրաց մէջ, և Գառնեցւոյ օրինակներուն հետ ամենեւին գործ չունին, խնդիրը մեծապէս կը փոխեն. և կրնանք զուրջել, թէ « Հանդիսի » մէջ գրուած յօդաւանդնով՝ այլ գրագրաց պարունակութեան գաղտնիքը սակաւին լուծուած չէ, այլ ծայրն ենք ծրարոցին. և թէ իբրև փորձ մի այլ ծրարը լուծելու կը նուիրենք այս յօդաւանդ: Առ այս շնորհապարտ եմք նախ Հ. Յ. Տաշեանին, որ առաջին շարժիչն եղաւ ծանրակշիւ խնդրոյս երկրորդ՝ առ հայագէտն Փ. Կոնիբեր, որ թ. 924 ձեռագրի հաստատոց ընդօրինակութեամբ ծանօթացոյց մեզ զայն, որով առիթ ստուաւ և մեզ լաւագոյն կերպով ճանչնալու և ծանօթացնելու այլոց՝ վանքիս թ. 1124 Ձեռագիրը <sup>1</sup>, որով չեմ տարակուսիր թէ Պրոկղի

լով թարգմանութեանէն աւելի՝ անոր լծակցեալ հաստատոց հեղինակներն յայտնուին :

Քաղաքատեղով Էջմիածնի թ. 924 և մի միակ կարծուած Ձեռագրի Ա. և ԽԶ. զուտաները՝ մեր յիշեալ Ձեռագրին հետ, տեսնուեցաւ որ իրօք մի միակն չէ այն, — ինչպէս կը կարծուէր, — այլ երկուքն ևս մի և նոյն խմբին կը վերաբերին. զի համաձայնութիւնը կատարեալ է յերկուստեք: « Հանդիսի » էջ 378 համեմատութեանէն զատելով՝ թ. 924 ձեռագիրը շատ աւելի սխալագիր ըլլալու է, քան թէ մեր թ. 1123 գրագիրն. զի յիշեալ համեմատութեան առաջին կէտ սրևեկին մէջ միայն 3 սխալներ <sup>2</sup> կան, զորս կ'ուղղէ մեր գրագիրն: Եթէ ընդօրինակողին ևս վերապրել ուզուի այդ սխալները, սակայն և այնպէս հրատարակողին անկ էր ուղղագրել գառնեցի փակագծի կամ ծանօթութեամբ: Մակայն այսպիսի վրիպակներու մեծ մասը՝ ոչ կոնիբերի ընծայելի են և ոչ իսկ ընդհանուր գրութեան. զի ՄԿ. կամ ՄԵ կնութիւն մակագրուած հաստատոց մէջ աւելի զգալի են, և այս յատուկ և նշանակելի պատճառաւ մի եղած է: Իսկ Պրոկղի բնագրէն ընդօրինակուած հաստատօքն՝ երկու ձեռագրաց մէջ իսկ կատարեալապէս իրարու կը համաձայնին, և ընդօրինակողն ևս կը տեսնուի՝ թէ ճշդութեամբ կատարած է իւր գերը:

Գորեան Հնդկաստանէն բերաւ ի վանս, յամին 1836:

2. Դեռնք աստ թ. 924 Ձեռագրի այդ սխալները, համեմատութեամբ թ. 1123 Ձեռագրի ուղղագրութեանց, Սրինակի աղագաւ. թ. 924 « Պրոկղէ » = թ. 1123 « Պրոկղի ». — թ. 924 « Եղակապք » = թ. 1123 « Եղակապք ». — թ. 924 « աստուածաբանութեան » = թ. 1123 « աստուածաբանութեան ». — թ. 924 « բարբառ » = թ. 1123 « բարբառ ». — թ. 924 « սկսեր » = թ. 1123 « սկսեալ ». — թ. 924 « ի վել » = թ. 1123 « ի վեր ». — թ. 924 « եկելք ի վել » = թ. 1124 « եկեալք ի վեր ». — թ. 924 « չիթեցաւ » = թ. 1123 « չիթեցան ». — թ. 924 « միմեց » = թ. 1123 « միմեանց ». — թ. 924 « կեալ » = թ. 1124 « եկեալ ». — թ. 924 « ի ստոյգեակն » = թ. 1123 « ի ստոյգ էակն », և այլն:

1. Գրագիրն՝ է նօտագիր, թղթեայ. գրուածութեան տարին անորոյ է, բայց ԺԷ. դարէն անդին չանցնիր. գրողն է Անտոն ոմն գծող, Ձեռագրիս հետ կազմուած է Պղատունի Ա. օրինակն՝ բոլորգիր փայր, որ գրուած է 1-600 է. Ներ. իսկ աստի մինչև 881 էլը բռնած են Պրոկղի հայ թարգմանութիւնն և լուծմունքն և մեկնութիւնք, Մեծութիւն է 20x18, միասին. մէն մի երես կը պարունակէ 34 տող, Հանգամանք՝ ըստ ամենայնի լաւ և անթիրի. կաշեկազմ պարզ. թէ Պղատունի և թէ Պրոկղի առաջին երեսները ծաղկեալ են, առաջինը՝ գունապոյն և սակի զարդերով. իսկ երկրորդն՝ առանց սակաւ: 2. Ձեռագիրս ընծայ է Յարութիւն Խասհակեան Աղանուրեանցի, զոր Հ. Սարգիս թէս:

Բ. Դիտելու ենք, որ Ա. բնագրի Մեկնու-  
թիւնն, որ կը սկսի « Որդեայք » (Թ. 1123  
Ձեռ. « որպէս և այնք ») բառերով, և կ'աւար-  
տի « իսկ մի անհասանելի՛ Ստուած է » բա-  
ցատրութեամբ, ի վերջոյ տասն տողի շարք պա-  
կասուր է Թ. 924 Ձեռագրի մէջ. իսկ Թ. 1123  
Ձեռագիրն ամբողջապէս կը լրացնէ այդ  
պակասը :

Գ. Կոնիքեր՝ « Պրոկղի Դիագոլոսի Շաղ-  
կապք աստուածաբանականք » մակագրին ներ-  
քեւ դրած Ա. պլուխն ընդորինակելով Թ. 924  
Ձեռագրէն, հանդերձ նախորդ և հետևորդ  
Մեկնութեամբք, բնաւ խօսք մ'ըջած չէ ան-  
կէջ անմիջապէս առաջ դրած ներածութեան  
մի համար : Արդ՝ այսպիսի լուծիւնէ մի կը  
հետևի, ըսա ինքեան, թէ մանրակրկիտ հայա-  
գէտս այդ տեսակ Ներածութեան մի հանդի-  
պած չըլլայ, — Թ. 924 Ձեռագրին մէջ. Այս  
մասին տարակոյտս լուծելու համար իրեն զի-  
մեցի, և նա պատասխանեց, թէ ինքը չի յիշեր  
որ այդպիսի բան մի տեսած ըլլայ : Բայց մեր  
Թ. 1123 Ձեռագիրն՝ փոխանակ միոյ՝ կրկին  
ներածութիւններ կ'ընծայէ մեզ, մին Ոմիկա-  
լոսի Լուծմանը նուիրած, իսկ միւսն՝  
Պրոկղի Դիագոլոսի կենսագրութիւն է և բնդ-  
արձակ տեսութիւն մի Աստուածաբանական  
շաղկապաց և անոր ընթերցանութեան վրայ :  
Առաջինն՝ համեմատութեամբ վերջնայն նոր  
ըլլալու է. վասն զի զայն արտադրող գրչն՝  
իրևե նախագոյ իմն կ'ենթադրէ զսա, ըսելով  
ի վերջ բանիցն. « իսկ վերնագիրն սորա  
ասէ այս կերպ. Շաղկապք Պրոկղի Դիագոլ-  
ոսի Պլատոնական իմաստասիրի՝ Շաղկապք  
աստուածաբանականքն » : Միւրը բանի՛ եր-  
կաքանախորն ի միասին մէկ մարմին կը կազմեն,  
և ունին իրենց առանձին կարևորութիւնը,  
նկատմամբ Պրոկղի և Յամբելախոսի կամ Ոմի-  
լախոսի հայերէն թարգմանութեանց և մեկնու-  
թեանց : Այս ներածութեան լիզուս, — հա-  
մեմատութեամբ Պրոկղի բնագրին, — աւելի  
մաքուր է և դիւրահասկանալի : Բաց աստի ու-  
րիշ կարևոր բաներ ևս կը պարունակէ Թ. 1123  
Ձեռագիրս, որոնք կը տարակուսիմ, թէ  
նոյն ձևով պատուին Թ. 924 Ձեռագրին մէջ, —  
« Հանդիսի » մէջ հրատարակուած երկու պլուխ  
հաստածներէն քասելով : Սիմոն թարգմանչի

Յիշատակարանն ալ Ձեռագրիս վերջին իշուր  
գրուած է, հանդերձ զոտոյն չորս առջ յիշա-  
տակարանով, փոքր ինչ սարբերութեամբ ճիշդ  
նոյն է Լլմիածնի Թ. 924 և Պետրոսեանի  
(Թ. 3 Ա) ընդորինակած Յիշատակարանի հետ :  
Պրոկղի զոց ցանկը կը պակսի մեր Թ. 1123  
Ձեռագրին մէջ, մինչդեռ Գառնեցոյ Գ. օրի-  
նակներն ունին զայն անթերի : Արդ՝ այս (Թ.  
1123) յոյժ կարևոր Ձեռագրիս՝ մեզ մատու-  
ցած այս և ուրիշ նորութիւններէն հանուելիք  
եզրակացութիւնքը յետաձգելով է ժամանակ,  
կարևոր կը համարինք գտնէ ասա նախ վերոյի-  
շեալ ներածութիւնը, — մասամբ և եթ :

Ոմիլախոսի իմաստասիրի եւ հոնտորի Ա-  
թենացոց եպիսկոպոսի Լուծմունք՝ Պրոկղի  
Դիագոլոսի անուանեցելոյ աստուածաբա-  
նութեանցն :

« Պարտապան եմք համալել զորս ի մեծ աս-  
տուածաբանութիւնս տեսութիւնք. առնուլ կար-  
ծիս մախ քան յառաջագրէլ զորոցս : Իսկ իմաստ  
այսմ՝ զորոցս՝ յայտովիկ պարունակիմ. մախ զի  
մի (Բ) երևեցուցանէ, եթէ սի է, և ըռնաբարակամ  
բամիւք քնախօսելով՝ վերայայտնեցէ զայս յոգ-  
մահուակեիլի մի, իրր զի մի քուցէ լիմիցի կամ  
դիպեցի, զի զոչ միմ՝ կարծեցէ և ասասցէ :  
Քանզի բազումք յէակացմ պատմնմ մեզ զմի  
զոյ, այլ ոչ եմ նոքա մի : Մակս որոյ խնդրէ ի  
ծեռն տտուից բամաւորակամաց, և գտանէ ըզ-  
յատկութիւն անարատ միոյմ. և այսպէս ի ծեռն  
տարացոյց օրինակաց՝ առաւել յայտնի լիցի բան :  
Քանզի զվնչ և աստացես և տացես իմացու-  
թեամ իրրև զերկիմ, զամծմ, զմիտս, և կամ  
թէ զմոյմ իմք զտոյզ էակմ, զորս ասեմ  
մակիլիմ զոյացութիւն և առաջիմ ամկուած :

Մի. Ոչ ոք ի սոցանէ է՛ մի. միակ, ասէ,  
զոլ կարծեցիմ զերկիմ, և զամծմ, և զմիտս, և  
զտոյզ էակմ. և աստ՝ ստոյզ էակ՝ զըրեշտակս  
ասէ. այլ ոչ եմ մի. վասն զի մասնաւորքն և  
մասնակացեալք՝ էակք եմ, և ոչ միակք : Այլ  
միակ ճշմարիտ՝ զսոցա ամեմեցում արարիլն և  
զմակիլիմ՝ Մատուած ասէ, յորմէ սոքա միղդեմք  
և մասնաւորք և իրրև զմիակս ստեղծամ, արա-  
րեալքն ՚ի մնամէ. զայս այսպէս ասէ. ԲՑ.  
Քննչի քնն և բնութիւն իւր և մանաւնի յարց  
յանքեալ է, և ոչ է նա անբարս և մարտք մի, որ.

դեռ Թուրքիայի Սուլթանաց, և սոցա եղելոց և յանգիւնելոց մարտի և իտալացիներու հետք։ Իսկ զհասարակութեան շահն լակոնիկեցի զհետ մտալ։ Վասն զի են քաղցումք, որ ժխտեն զմիութիւն, և զպաւտիւ միութեամ կեղծաբար ազդեն մեզ՝ ի ձեռն մուրք և ամթիւ յօղուածոց և ամամարմնութեամբ ազգին, այլ բնութեամբ և մասնատրութեամբ են կտակակցեալք։ Իսկ ամարատն և ամխարբալակն մի՝ ոչ ըստ բնութեամ կտակակցեալ և ոչ ըստ էութեամ և ամկմամ։ այլ գերազանցէ քամ զմտա ամենմիտն։

Մկ. Գարգալար զայս եղ. զայս ամենայն մուսազարամաց, (?) և զԱստուած՝ երգիչ. և որպէս երգիչ մի է և երգարամ իւրովք մասնօք մմա միակեալ, մի և ոչ մի զօրով, մոյմպէս և այս։

ԲՅ. Այլ գերայայտէ մի՝ օրինակ բնութեով բազմաց, և զայս թուոց սկզբամբ միոյն և ըստ կամոնի իբր զմուսազարամ։ Վերագոյացուցամէ զսեզ, և թէ մախկի՝ միակն է ամենայն թուոց. և յորժամ զայս յայտնեցէ և քննեցէ անշարժեի և անբակտելի յամենայն մուրթակամ կուոյ, յայմժամ առնու զայստիկ՝ վերադրեալ և յամ դիմանելի զկարգ բանին, և այլ ինչ հետեւեալ մմա երևեցուցամէ։ Եւ ապա ըստ կարգի ի վերայ ամենայն հետեւեցելոց ստնէ զայս. քամզի մախկին վերադրեալսն քամք՝ հետեւեցելոց զկնի հիւկուտն կացուցամէ յայտնութեամց. և այսպէս ի մտաբարում անծէ, որպէս զի իբր մարմին իւրով մասարմը յամզեալ, և առջ զիւրն ամենմիտն։ Իսկ վերմազինը սորա այս կերպ է՝. Շարկապք Պրոկիի Դիալօփոսի պրատնականն իմաստասիրի։ Շարկապք աստուածաբանականնքն։

Այսպէս Պրոկի վիտանորդ աթուոյ աստուածային Պրատնի, էր ազգաւ Էրնացի, որզի մեծազարմից ազատաց, որոց ոչ զոյր զաւակ. և ի ձեռն աղօթից միշտ բախէին զգրուս ողորմութեամ Աստուծոյ։ Վասն որոյ ազդեաց ի մոսա յաստուածային ազնեցութեամց, եթէ տացի ձեզ արու մմնուկ, որ ծախեացէ զամենայն հասակս

1. Այս տեղ ճիշտ այսպէս կարմրադեղով և շարունակաբար գրուած է երկրորդ մերածութիւնս, յորում այմպիտի պարագմեր կը յիշուին Պրոկիի ծննդեան և սննդեան մասին, որոնք ամտարակոյս յումակամ յաղբերէ մի կամ յաւանդութեանէ մ'առնուած են, թէ և այլ աղբերք կամ աւանդութիւնս աւելի քրիստոնէական՝ քամ թէ հետմոսական բնադրոշմ ունել կ'երևի։

իւր ի տեսութիւն վերմակամ վիճակացմ։ Եւ իւրև զարգացեալ վերացաւ ի հասակ համբակակամ ի ձեռն սրբութեամ որ ի մմա, ճաշկեաց զմեծեաց ըստ ըստ երէց Իսկապէս զմեծեաց, ամմմամ ի բնակեցելով. և աստ մայ զարբութիւն, որով ճիշտ որ ի մմա զկայեակուս երիտասարդութեամ, որով ալէկոծիւ ամմմայմ զզայնութիւն և մտաց տեսութիւն. այլ (և) զօրութիւն ամմմիւ, որով եղեմ ա(տ)մկեալ ի վերուստ(?)։ Երկրորդ յամհում և ի սուրբ ճգնութիւնս ուսմամց, թէ ի բնակամ աստացէ ոք, կամ բնաբանակամ տեսութիւնս, կամ թուոց. եթէ երկրաչափութեամց և մոյմ ինքն ի հասակն արուեստն, որով վերայայտմի հատուած և շարահիսութիւն ամմմայմ էիցս եղեցութեամց, և առ միմանս հարդրակցութեամ և բաժանմամց. և թէ զիմարդ սոքօք՝ բարիոք ճարտարապետութիւն ամմմեցումն Աստուծոյ և ստեղծագործողին ի վեր անցամէ քամ զամնմայն միտ տեսադաց։ Եւ դարձեալ ընդ այսու ամմմեցումն բնութեամ շարժութեանն պետութեան վերաբերեաց. վասն զի թրոկեալ զորս ընդ ժամանակաւ և ընդ եղանակով են բարդեալք զխարբարմուք էակացմ, քամզի բազումք ի մոցամէ կապեալ են ինքն և ոչինչ։ Այլ մա՛ ի վեր դիմեալ ի վերայ ստոյգ և ճշմարիտ էակին և զոյն, և ոչ ի մա միայն ելուց կեւ զոսհոն իւրն տեսութեամ. քամզի ի վեր էանց քամ զկում մախկիւ, զՊրատնի սասն, և զիւրն ծայրագոյն իմացութեամ մտաց, և ել առ ամհասանելի միակն. և որչափ կարողութիւն էր ջանացեալ ճամաչել զէիցմ զամմկալի և զտուփելի, զիմեալ և ճաշկեաց Պրատնի ի իտալացի Իսկապէս զմեծեաց, զորս (մա) յայտնեաց, և զորս ի մոսա իմաստութիւն յակտեմակամ էակացմ, և զերէնդութեան հասարակութեան վերաբերեաց, եթէ որպէս ի մոսա ծարաւեալ Պրատնի մմա ամիմամայի և ամնկատելի էակին, և ամմմայմ իմամալոյ և գերիմամալոյ վերանցեալ վայելակամ դրութեամ։ Եւ դարձեալ ի վերայ ուրաձգելոց և հրատեսակ սրելոց ճմմակամացմ, որ զարիստտէլեամ ունէին զպանուցեալ բանահիսութիւն, յետս դարձոյց. և զորս Արիստոտէլ զմեծ և զմեծ զբանակաւանս ասան և զմոցա կարծեալ ուղղութիւնն, որովք իստուէին զՊրատն մոյմ Պրիպատոյցիցմ, յայտնեաց և ամկայունս արար։ Իսկ երրորդ ի վերայ սոցա ամմմայմի յաւել (և) բնութեան և բարոսական ըստ

և համարեց իր քարոզական տեսութեանը՝ աղբիւրս Կիւնիսիոսը բղխամաց եհեղ, սակս որոյ Դիադոթոս՝ որ է վիտամորդութիւն Պրատոնի ա մուանեցաւ, յորոց զկնի մորա իմաստուը էիմ: Մայրս ի սակս Պրոկղի համաուօտարար տուաք ապացոյց: Իսկ Շարդակայս աստուածաբանութեան ասիմ հատորք զոցս Կիւնիսիոս (ՄԵՆՆ) կոչի հիլիւ մացի, և շարժարտ ի հայ, և եքրայեցի լիւնի: Եւ վասմ այր կոչի շարկակայք, իբր զպարզ յասն մայնի, քամզի և որոց առ ուսմունս գայցնի՝ ա մնեմայնի մախ զպարզմ ուսուցանեն, և սպա զորս ի Յոցամէ բարդիմ: Որպէս գծագրեցաւ ալֆաբետատակամաւ և զամուռ, և ամուսար՝ լլգ ըսպ, և բայի՝ զբամ, և սպա մոքօք զսեռ և զտեսակ բանիմ, որպէս ուսում Կիւնիսիոս: վասմ ամենայն առաղբելոց պարզմ մախիլնք ելով. իբր չորից հիւրայց ասեմ, հուր և օր, շուր և երկիր: Քամզի սոցա զաղակարաւ և բամիցմ իւր շարկակ կուէր. իբր ի վերայ ասն մայմ պարզիցմ աստուածաբանական տեսութեանցմ. վասմ զի մախիլն քամ զվիսակի իմացուածմ՝ այլ զլիմէ ծամիցի, խնդրէ իմամալ: Եւ այսպէս պարզարար և Կիւնիսիոս, որ է շարաիլուսուած ամենայնի զսկեսեմն երեսեցոյց. իբր մտաց, ամիմ, բնութեամ և սեռի, շարժ Կիւնիսիոս Կիւնիսիոս Կիւնիսիոս Կիւնիսիոս, օգնակամութեանը մախիլն բամիմ Տեառն Քրիստոսի Աստուծոյ մնուլ: Մյլ յաւելցուք փորդ իմը և յաղազ ըմթեռնուլ, թէ որպէս պարտ է զիմաստասիրական զայստսիկ գրեալս ըմթեռնուլ. որպէս զՍիկրա տեայ ասեմ, թէ ըմթեռնուլ Սիկրատէս զգիրս՝ ըստ օրիմակի մատաղ մանկամց դեռուսամանց. զի ի միմ բամ դառնայ բարձր՝ ամզամ ի մոյմ ըմթեռնեալմ, զի ոչ եթէ մախ զազս պարտ է զըմթեռնեցելոյ տալ, այլ իմամալ և վերադիտել զվիտս բամիմ հարկարոր է, և զիմաստասել և զշարադրել և զբարձուածոյսմ և զկնի վիտսմ աւմուլ, և զկէտս, և սպա զամենայն զայլս կազմողսմ առ ի միտսմ: Իբրև զուր՝ զօրտէ, բուլ՝ զվալտ, որ է ծամը, և Կիւնիսիոս՝ որ է շրջակասեղ, և զայն մամս սոցա պարտ է արուեստել ընդ ծայնի և ընդ դիմաց բամիմ, իբր զի զվիտսմ ամուլար իմացոց: Եւ զայս ևս զի տասցուք, զի բարձր ծայնի ըմթեռնուլ՝ շփութեալ խակամէ զիմացութիւնս, որ է միտքմ ալմ ամիմ: Դարձեալ գիտել է և սայք. զի սկլ է զօրութիւն և մեղգործութիւն ամիմ, և

սկլ մտաց. և ամենայն հելլեմացի խօսք՝ զիւրմ ուրոյն ունի զամուռ, մոյմպէս իւրմ գոյացութիւն (?): Իսկ ի հայս՝ սակս աղբատութեամ լնգուի՝ ոչ ամուանս ունելով և ոչ Կիւնիսիոս գրէ զի Կիւնիսիոս, այլ Կիւնիսիոս Կիւնիսիոս Կիւնիսիոս. Եւ արդ լուր, զի ամիմ կոչի Կիւնիսիոս իսկ մտացմ Կիւնիսիոս իսկ իմացելոյմ և վերագրելոյմ Կիւնիսիոս: Եւ արդ առեալ զմի մի ի սոցամէ մեկնեցոցք՝ »:

Արդ՝ այս ներածութեան մէջ եղած այլ և այլ ակնարկութիւններէն կը տեսնուի, թէ անոր հեղինակն ոչ միայն տեղեակ օճէ է հելլէն լեզուին, այլ նոյն իսկ իմաստասիրական մակարութեան և այլ և այլ գրութեանց: Բ. դիտելու ենք, որ այդ ներածութիւնը Պրոկղի կամ Ուլիակոսի գրոց պարզ թարգմանութեան մի առթիւ շարադրուած է և չէր կարող լինել. վասն զի մեզ հասած են նախնեաց հարկարար թարգմանութիւններ, և սակայն նոցա թարգմանիչք երբէք ներածութեամբ ծանուցած չեն իրենց թարգմանած բնագրերը. այս երևոյթս թէ և ոչ եզական, բայց հազուադիտ իմն է: Որքան ներածութեանս հեղինակն հարկ է որ մեկնութիւնս ևս գրած ըլլայ գրոցն Պրոկղի: Եւ ստուգիւ Մասեանս դարանիս թ. 1123 Զեռագիրն շոշախելի և եզական ընծայութեամբք բոլորովին կը հաստատէ մեր ըսածը: Այո՛, Զեռագրիս մէջ կան, — բայց ի Պրոկղի բնագրէն և Ուլիակոսի լուծմունքէն, — նոյնպէս ուրիշ Մեկնութիւններ և Բնագրեր, որոնք առաջիններէն զատելու համար անշուշտ՝ ձեռագրիս լուսանցից վրայ նշանակուած են այսպէս Մկ. և Բն. Հաստուածոցս տարբեր հե-

1. ներածութեանս մնացած մասն, որ դեռ չորս երես կը գրուէ Զեռագրիմ մէջ, աւելորդ համարեցամ ընթրիմակել. վասմ զի առաջիմ մասի պարունակութեան կարող եմ ըմթեռնողք գուշակել ման ամոր պարունակութիւնը: Զայս միայն կը ծանուցանեմք, թէ վերոյիշեալ բամից և բարից մատուցը մեկնած ժամամակ, աղիսակ մ'աւ դըրուած է աստ կարմրադեղով, որոյ մէջ ըշամակուած են, — Պրոկղի ծանոթ պէս — առաջիմ կարգիմ մէջ՝ ԱԿԿ, երկրորդիմ՝ ՄԵԿ, երրորդիմ՝ ՄԵԿԵ, չորրորդիմ՝ ՄԵԿԵԿԵ, հիմագրորդիմ՝ վերջոյ ԿԵ, վեցերորդիմ՝ ԱԿԵԿԵ ԿԵԵԵ և սեւեւ ԿԵ, հոսակ եթմեղորդիմ՝ ԱԿԵԿԵԿԵ ԿԵ:



ծայինան. այլ իւրաքանչիւր ըստ իւրում կարգի և զօրութեան առնու զներկացումն նոցա : Ոմն միազգաբար, իսկ ոմն բազմացապէս. և ոմն մշտնջենապէս, իսկ ոմն ամանակաւ. և ոմն անսեռաբար, իսկ ոմն սեռականապէս : Հարկ է զի որպէս բաժանեալք այսք՝ հաղորդութեամբ նոցա, կամ ի հաղորդելոցն եղիցի բաժանեալ և կամ ի հաղորդեցելոցն. այլ աստուածային ամենայն՝ մշտնջենաւոր զմի և զնոյն ունի կարգ, և անշարամանելի է առ ամենսեան և անխառնակելի : Պակասի՝ իբր զի հաղորդելականաց միայն եղիցի փոփոխական. մերձկացումն և ոչ մի և նոյնութիւն ի նոսա եղիցի, և այլևայլութիւն և այլ և այլ կերպիւ ներգործել առ աստուածայինն. քանզի նոցա ամենքեան՝ մի և նոյն և միաբար ներկանան. այլ հաղորդողէն՝ ոչ ՚ի մի և նոյնութիւն ներհետեւին նոցա, այլ իբր որ ինչ ի նոցանէ՝ կարող եղիցի իւրաքանչիւրոյն ներկանայ, և ո՛րբար ներկանայ, հիբար և հաղորդեցի նոցա. վասն զի ըստ չափոյ սոցա՝ ներկացութիւն և հաղորդութիւն է :

ԼԾ. Ամենեցուն ներկացեալ են միակք : Այս բան առ մեզ, եթէ միակք և միայնք՝ հաւասար ամենեցուն ծագին ինքոյ յանկուածոյ, և հաւասար զամենսեան աստուածացուցանեն իւրեանցն միեղէն լուսով :

ՄԿ. Ամենեցուն ներկացեալ են (միակք) ներգործութեամբ Որդի և Հոգի, որք են աստուածական միակք հաւասարապէս, իսկ իմասնալիքն անձինք և մարդկային անձն և ամենայն կենդանեացն անձինքն ոչ միապէս մերձեանս ի նոսա, այլ ոմանք՝ մշտնջենաւորաբար և մերձաւորապէս և անսեռաբար. իսկ ոմանք ամանակաւորաբար և սեռականապէս և աղօսա ինչ ի ձեռն միջնորդութեան մտացն, ի հեռասանէ՝ իմացութեամբ միայն և կարծեօք ներկանան, հազիւ ունելով առ իւրեանս զկարծիս ծանօթութեան :

ԲԶ. իսկ բաժանմունքն նոցա՝ յառողացն կարծեցի. զի ոչ հաւասար և ոչ բնութեամբ և ոչ ներգործութեամբ է առնողաց ամենայնի էութիւն. զի ըստ իւրումն էութեան անուռ զայն գերազայն լոյս առող. և զաղափար տրա՝ զայն պիտեմք, որք յարեզականէ առնուն բաժանմամբ. իսկ ինքն յիւրեան ան-

բաժանելի իբրև ի միոյ բոլորէ՝ միակք ծագումն, նոյնպէս և գերազայնցն և զմիեղէն արեգակունս կալլիր ի մտի » :

Այս համաստ զլիտոյ ընդօրինակութենէն կարէ զուշակուիլ, թէ ո՛րքան կարեւորութիւն ունին Պրովդի Աստուածաբանական շաղկապաց մէջ, — բայց ի Ոմիլախօսի լուծմունքէն, — նոյնպէս այս կարգի ընդարձակագոյն ևս Մեկնութիւնք և Բնագիրք, զորս անսարակոյս Գառնեցին իւր առջև ունեցած է, ըստ հայերէն թարգմանութեան, զուցէ թէ իբր միակ աղբիւր իւր մեկնութեանց : Եւ առ այս բաւական է համեմատել Գառնեցոյ ՃԽԳ գրութիւն՝ սորս հետ, թէպէտ և նա կը ծանուցանէ, թէ « Այլ դժուարաւ մտածանէ զմեզ ի բնաբան անդ » : Բայց Գառնեցին իսկ շատ անգամ իբրև յանելանելի բաղդ շփոթած թափառեր է այս կարգի Մեկնութեանց և բնագրաց մէջ. սեղ սեղ աւնոնցմէ հատուածներ փոխ առած, Պրովդի բուն բնագրին իբրև ամբողջացուցիչ մատուցներ կարծելով զայնս : Գառնեցին՝ Սիմոնի թարգմանութեան մէջ իսկ յանախ փոփոխութիւններ մտցուցեր է, թէ բանից և թէ իմաստից մէջ, որպէս զի աւելի հասկանալի ընէ զայն. սակայն ուսումնական բանից և բացատրութեանց կողմանէ՝ Սիմոն կրօնաւորն շատ աւելի ճիշդ է. նոյնպէս իւր բնագրոց հաւատարիմ՝ և բաւաջի թարգմանութեամբն՝ ըստ իս աւելի արժէք ունենալու է գիտնոց առջև, քան զԳառնեցին, որ խոտորելով յոյն բնագրէն, երբեմն երբեմն ըստ կամս վարեր է զայնս :

Բայց այժմ մենք միայն ի նկատի առնելով Թ. 1123 Չեռագրի ընծայած Մեկնութիւնքն և Բնագիրքը, չիմացանք, թէ ի՞նչ պատճառաւ Հ. Յ. Տաշեան առիթ ունենալով հրատարակելու « Հանդիսի » մէջ այս կարգի հատուածներէն երկուքը, խօսք մ՛անգամ չըբաւ անոնց վրայ, այսինքն թէ ի՞նչ ժամանակի և երբ մուտ գտած են Պրովդի թարգմանութեան մեջ : Եթէ Յամբախօսին վերագրելով զասոնք՝ անոր մասին անցողաբար ըսածն՝ ստանջ ևս բաւական համարեցաւ. այս, կարծեմ, թէ չկարէ լինել ուղիւ. վասն

զի տարրեր բաներ ըլլալու բաւական նշաններ կան, — ինչպէս ըսինք և պիտի տեսնենք ի հետևեալն: Սակայն մենք Պրոկղի բնագրի պարզ թարգմանութեան ծանօթ խնդրէն աւելի այս դեռ անծանօթ իրաց կնճրոստ խնդրոյն աւագ կարևորութիւն կ'ուզենք տալ: Ուստի Մատենադարանիս թ. 1123 Ձեռագրի պարունակութիւնը ծանօթացնելէն վերջ մեր ուսումնասէր ընթերցողաց, բնականապէս հետևեալ հարցերու վրայ կը հրաւիրենք մեր և այլոց ուշադրութիւնը. Ա. Ո՞վ էր Ուիլիսոսն այն, և ի՞նչ լեզուով գրեց Պրոկղի Դիաղոխոսի Աստուածաբանական շաղ-


կայացն լուծմունքը: Բ. Սիմոն կրօնաւորն արդեօք վրացերէն բնագրէ թարգմանեց այդ լուծմունքը, զոչ ընդ բնագրին Պրոկղի, թէ ընդհակառակն իրմէ յառաջ յունարէնէ թարգմանուած կային, և կամ յետոյ ուրեմն թարգմանեցան և մուծան ի գրի անդ: Գ. Վերոյ յիշեալ Մեկնութիւնք և Բնագիրքն մի՞նչ նոյն հեղինակի գործ են արդեօք, թէ տարրեր: Դ. Ե՞րբ արդեօք և ի՞նչ պատճառաւ մտան Պրոկղի թարգմանութեան մէջ այդ հաստուածներն: Ե. Սիմոն կրօնաւորն արդեօք թարգմանի՞չ միայն եղած է յիշեալ գործոց, թէ ընդհակառակն խմբագրի դեր ևս կատարած է:

Հ. Բ. Ս. (Շարայարեղի).



ՀԵԼԼԵՆ ԻՄԱԾՏԱՍԻՐԱՑ ՀԱՏԸՆՏԻՐ ԽՐԱՏԻ

ԹՐԱԳՄԱՆԵԱԼՔ Ի ՀԱՅ



(Ե. Տեզա խտայացի հայագիտի ուսումնասիրոտրիան)

(Տես յ'էջ 71)



էր անյայտ զուրցուած մ'է նաեւ հետեւեալն. « Կուսիանացիքն լան ըզծնեալսն. և երանեն զլախճանեալսն »: — Ո՞չք էին կուսիանացիք: Հին ազգաց մէջ թրակացիք համարուած են՝ իբրու ամենէն աւելի ատեցողք աշխարհի կենաց. Արասեանց համար ալ զնոյն կը հաւատարմացընէ Հերոդոտ (Ե, 4. յորմէ և Սեքստոս Էմպիր. և Վալերիոս Մաքսիմոս), և առ Պոմպոնիոսի Մելայ կը յիշատակուին ժողովուրդք (Բ. 2) որ ծննդապէս կնոջ քով նստած, արտաստեհ և ըզծնեալն կ'որբան. բայց մեզի կարևորն ըսենք, որ հայերէն հաւաքածոյին խօսքը կը գտնենք առ Ստրէոսի Հերոդոտիայ անունով: Բայց ես կրկին կը հարցընեմ, թէ ո՞չք են Կուսիանացիք: Լըմբեան տպագրին վալերիոսի ծանօթութեանց մէջ ըսուած է թրակացեց նորածին մանկանց աշխարհ գալուն վրայ արսասուելու

սովորութիւնն ունէին նաև Կախացիք, որ հայկական բնագրին անուանը մերձաւոր կրնայ համարուիլ: Բայց ի՞նչ ազգ են սոքա, և ո՞ր աշխարհագիր կը յիշատակէ: Այս տարակուսանաց լուծում կամ պատասխան մը գտնելու յուսով՝ աչքէ կ'անցընեմ զՄաքսիմոս և զԱնտոնիոս, և կը գտնեմ որ օգնական ձեռք կը կարկառեն: Εἴτε τῶν ἰλιστίνωνος γυναικῶν. Καυσιανοὶ τοὺς μὲν γεννωμένους θρηνοῦσι, τοὺς δὲ τελευτήσαντας μάκαρ(ίζουσι) (Մաքս. 6.23. Անտ. 103): Այս ընթերցմամբ դիւրին է ուղղել գրայականն և ընթեռնուել Կասիացիք: Καυσία կը գտնենք և յԱռակա Չենթրիոսի Եւնյպիսի իմաստով տողեր կը գտնենք և յԵւրպիլիդ՝ ի կրնափոխ ողբերգութեան, զորս հայ թարգմանիչն կը փոխէ յարձակ բան (Բ. 7). « Եւրպիլիդէս սաէ. Պարտ է զնոր ծնեալս ողբալ, զի ի շարիս գան. իսկ զվախ-